ԵՄ Թվինինգ ծրագիր

Աջակցություն Հայաստանի Ազգային Վիճակագրական Ծառայությանը
Թվինինգ ծրագրի միջոցով

AM09/ENP-PCA/TP/04

Առաքելության զեկույց

Բաղադրիչ Ե

Հարմոնիզացված սպառողական գների ինդեքսի ներդրումը

Գործունեություն Ե.4.2
Վերապատրաստման սեմինար ՀՍԳԻ վերաբերյալ Վիճակագրության տարածքային գործակալությունների համար

Առաքելությունը իրականացրել են՝
Նադեժդա Ալեյեվան, Լիտվայի վիճակագրություն
Օսկարս Ալկսնիսը, Լատվիայի վիճակագրության կենտրոնական բյուրո

Հայաստան, 11–13Հուլիսի 2012

Վերջնական Տարբերակ

National Statistical Service of the Republic of Armenia	Central Statistical Bureau of Latvia	Statistics Lithuania	Statistics Denmark

Հեղինակների անունները, հասցեները և էլ.փոստի հասցեները

Նադեժդա Ալեյեվա
Գների վիճակագրության բաժնի պետ
Լիտվայի վիճակագրություն
29 Gedimino Ave
LT-01500 Վիլնյուս
Լիտվա
Nadiezda.Alejeva@stat.gov.lt

Օսկարս Ալկսնիս
ՍԳԻ ենթաբաժնի պետ , Գների վիճակագրության բաժին,
Լատվիայի վիճակագրության կենտրոնական բյուրո
1 Lāčplēša Street
LV-1301 Ռիգա
Լատվիա
Oskars.Alksnis@csb.gov.lv

Բովանդակությունների ցանկ ցանկ

0. Ամփոփ նկարագիր 6
1. Ընդհանուր մեկնաբանություններ 7
2. Գնահատում և արդյունքներ 9
3. Եզրակացություններ և առաջարկություններ 14
4. Հաջորդ առաքելությունից առաջ իրականացվող գործողություններ (Ե.6) 15

Հավելվածներ :

Հավելված 1. Տեխնիկական առաջադրանք (Ե.4.2); 11–13 Հուլիսի 2012 17
Հավելված 2. ԱՊ փորձագետների հանդիպմանը ծրագիրը 11–13 Հուլիսի 2012 19
Հավելված 3. Անձինք, որոնց հետ հանդիպումներ են տեղի ունեցել 21
Հավելված 4. Սեմինարի մամուլի հաղորդագրությունը 13 Հուլիսի 2012 24

Այլ նյութեր, որոնք պատրաստվել են սույն գործունեության համար

Հավելված Ե.4.2.5 Հարմոնիզացված սպառողական գների ինդեքս
(PP պատրաստվել է Նադեժդա Ալեյեվայի կողմից)
Հավելված Ե.4.2.6 ՀՍԳԻ և ՍԳԻ տարբերությունները Լատվիայում
(PP պատրաստվել է Օսկարս Ալկսնիսի կողմից)
Հավելված Ե.4.2.7 Հարմոնիզացված սպառողական գների ինդեքսը և գնադիտարկումների ընթացակարգերը Լիտվայում
(PP պատրաստվել է Նադեժդա Ալեյեվայի կողմից)
Հավելված Ե.4.2.8 ՀՍԳԻ փորձը Լատվիայում
(PP պատրաստվել է Օսկարս Ալկսնիսի կողմից)
Հավելված Ե.4.2.9 ՀՍԳԻ ներդրումը Հայաստանում
(PP պատրաստվել է Գուրգեն Մարտիրոսյանի կողմից , ՀՀ ԱՎԾ)

Հապավումների ցանկ

ՇԵ	Շահառու երկիր
ԱՍԴՆ/ՀՍԳԻ	Անհատական սպառման դասակարգիչը ըստ նպատակների դասակարգման ՀՍԳԻ կարիքների համար արդիականացված՝ ըստ Հանձնաժողովի Կանոնակարգի (ԵՀ) No 1749/1999
ՍԳԻ	Սպառողական գների ինդեքս
ԵՄ	Եվրոպական Միություն
ՏՏՀ	Տնային տնտեսությունների հետազոտություն
ՀՍԳԻ	Հարմոնիզացված սպառողական գների ինդեքս

ԱՊ	Անդամ պետություն
ՀՀ ԱՎԾ	Հայաստանի Ազգային Վիճակագրական ծառայություն
ԳՀ	Գնողունակության համարժեքություն
ԹՄԽ	Թվինինգի մշտական խորհրդատու
ՏԱ	Տեխնիկական առաջադրանք

0. Ամփոփ նկարագիր

Սույն առաքելության հիմնական նպատակներն էին հետևել Ե.4 առաքելության առաջարկություններին, բաղադրիչի աշխատանքային ծրագրում նշված գործողությունների առաջընթացին, ինչպես նաև քննարկել սեզոնային ապրանքների հարցերը և կիրառվող որակի ճշգրտման մեթոդները ՍԳԻ կազմման համար:
Սույն առաքելության մեկ այլ կարևոր գործունեություններից է հանդիսանում ՀՍԳԻ վերապատրաստման սեմինարին վիճակագրության տարածքային գործակալությունների և արտաքին շահառուների մասնակցությունը:
Որոշվեց, որ ՀՀ ԱՎԾ-ն կշարունակի մեթոդաբանական և տեխնիկական լուծումների իրականացումը, որոնք կիրառվում են ԵՄ ԱՊ-ի կողմից՝ ՀՍԳԻ կազմման համար ազգային ՍԳԻ արտադրման միջավայրում:
Համապատասխան փաստաթուղթը, որը կարտացոլի ԵՄ Թվինինգ ծրագրի ընթացքում իրականացրած աշխատանքները, կպատրաստվի մինչև 2012 թվականի դեպտեմբեր ամիսը:

Սեզոնային ապրանքների սեզոնից դուրս ժամանակահատվածում գների գնահատման համար կիրառվող մեթոդների քննարկումներից հետո նշվեց, որ կարելի է դիտարկել որոշակի բարելավումներ: Նախորդ առաքելությունից ի վեր գրանցվել է որոշ առաջընթաց որակի ճշգրտման մեթոդների կիրառման համար: Ինչևէ, հետագա զարգացումները այս որոլտում ողջունելի կլինեն:

Վերջնական պայմանավորվածություն ձեռք բերվեց Վերապատրաստման սեմինարի կազմակերպչական հարցերի վերաբերյալ:

1. Ընդհանուր մեկնաբանություններ

Սույն առաքելությունը պատրաստվել է ԵՄ Թվինինգ ծրագրի շրջանակներում: Սա թվով չորրորդ առաքելությունն էր և հանդիսանում էր լրացուցիչ առաքելություն (համեմատելով նախնական պայմանագրի հետ) Ե.4.2 Վերապատրաստման սեմինար ՀՍԳԻ վերաբերյալ վիճակագրության տարածքային գործակալությունների համար բաղադրիչ Ե-ի շրջանակներում՝ Հարմոնիզացված սպառողական գների ինդեքսի ներդրումը:

Առաքելության հիմնական նպատակները համապատասխանում էին Տեխնիկական առաջադրանքին: Դրանք հետևյալն էին՝

- Հետևել բաղադրիչի աշխատանքային ծրագրին ինչպես նշված է Ե.4 առաքելության զեկույցում;
- Խորհուրդներ տրամադրել ընթացիկ ենթա-ծրագրերի վերաբերյալ կապված ՍԳԻ/ՀՍԳԻ զարգացման հետ (մասնավորապես սեզոնային ապրանքների հարցերի և որակի ճշգրտման մեթոդների վերաբերյալ);
- Մասնակցել վիճակագրության տարածքային գործակալությունների և արտաքին շահառուների համար կազմակերպված սեմինարին;
    - ✓ Ներկայացնել և քննարկել ազգային ՍԳԻ և ՀՍԳԻ տարբերությունները;
    - ✓
    - ✓ Ներկայացնել Լատվիայի և Լիտվայի փորձը ՀՍԳԻ ներկայացման վերաբերյալ;

- ✓
- ✓ Խորհուրդներ տրամադրել գնաղիտարկումների վերակազմակերպման վերաբերյալ

ԱՊ փորձագետները ցանկանում են իրենց խորին երախտագիտությունն արտահայտել բոլոր այն պաշտոնատար անձանցից և անհատներից, որոնց հետ իրենք հանդիպումներ են ունեցել ՀՀ ԱՎԾ-ում՝ վերջիններիս ցուցաբերած բարյացակամ վերաբերմունքի և արժեքավոր տեղեկատվության համար, որը տրամադրվել է նրանց Երևանում գտնվելու ընթացքում և մեծապես նպաստել նրանց աշխատանքին:

Սույն առաքելության զեկույցում նշված տեսակետները և դիտողությունները պատկանում են ԱՊ փորձագետներին և դրանց համապատասխանությունը Լիտվայի վիճակագրության կամ Լատվիայի վիճակագրության կենտրոնական բյուրոյի տեսակետների հետ բոլորովին պարտադիր չէ:

2. Գնահատում և արդյունքներ

Ներկայիս կարգավիճակը, առաջընթացը և զարգացումները վերջին՝ Ե.4 առաքելությունից ի վեր

ՀՀ ԱՎԾ-ի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի ղեկավարը ներկայացրեց առաջընթացը 2012 թվականի ապրիլ ամսվա հանդիպումից ի վեր: Ուսումնասիրվեցին ԵՄ փորձագետների կողմից չորրորդ առաքելության զեկույցի պլանավորված և ներկայացված աշխատանքները ըստ գործունեությունների: Շարունակվել են վերլուծությունները կապված միևնույն ամսվա ընթացքում գնադիտարկումների հաճախականության նվազեցման ազդեցության հետ Երևան քաղաքի ՍԳԻ համար: Հաշվարկները շարունակվել են մինչև 2012 թվականի հունիս ամիսը:

Ներկայիս մոտեցման փաստաթղթավորումը կապված Հայաստանի ՍԳԻ-ի սեզոնային ապրանքների հետ և որակի ճշգրտման ընթացակարգերը գտնվում են նախապատրաստական փուլում: Գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի աշխատակիցները իրականացրել են ապրանքների և ծառայությունների վերադասակարգման աշխատանքը՝ համաձայն ԱՍԴՆ/ՀՍԳԻ դասակարգման: Կատարվել են լրացուցիչ գործունեության նախապատրաստական աշխատանքները ՝ վերապատրաստման սեմինարի վերաբերյալ (գնադիտարկողների և արտաքին շահառուների համար): Իրականացվել է ՇԵ երեք փորձագետների ուսուցողական այցելությունը Դանիայի վիճակագրություն:

Վերապատրաստման սեմինարի օրակարգի և շնորհանդեսի նյութերի քննարկումը

Վերապատրաստման սեմինարի նախնական օրակարգը քննարկվեց բրիֆինգի ժամանակ Թվինինգի մշտական խորհրդատուի (ԹՄԽ) Թոմաս Բիի և ՇԵ ծրագրի ղեկավար, ՀՀ ԱՎԾ նախագահ պրն. Ստեփան Մնացականյանի և Գների և միջազգային համադրումների բաժնի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանի հետ: ԹՄԽ-ի հետ քննարկվեց և ընդունվեց ԵՄ փորձագետների կողմից պատրաստված շնորհանդեսների բովանդակությունը: Քննարկվեցին նաև կազմակերպչական հարցեր և կատարվեցին օրակարգում ներառված թեմաների վերջին պարզաբանումները: Հատուկ ուշադրություն էր դարձվել խմբակային քննարկումների հարցերի թեմաներին, որոնք վերաբերվում էին գնադիտարկումների վերակազմակերպմանը:

Միջանկյալ ՀՍԳԻ հաշվարկների հարցերի քննարկում, հետագա խորհուրդները որակի ճշգրտման մեթոդների վերաբերյալ

.

Քննարկվեցին ՀՀ ԱՎԾ –ի կողմից միջանկյալ ՀՍԳԻ հաշվարկների համակարգի հետագա զարգացումները: 2010 թվականի կշիռները կօգտագործվեն միջանկյալ ՀՍԳԻ հաշվարկների համար: Այս կշիռները, որոնք դասակարգված են ԱՍԴՆ/ՀՍԳԻ դասակարգման համաձայն, կարդիականացվեն 2011 թվականի դեկտեմբերի համեմատ և կկիրառվեն 2012 թվականի գների ինդեքսների հաշվարկման համար: Գների և ինդեքսների հաշվետու ժամանակահատվածը կլինի 2011 թվականի դեկտեմբերը: Ծրագրային ապահովման որոշ փոփոխություններ, որոնք անհրաժեշտ է իրականացնել միջանկյալ ՀՍԳԻ հաշվարկման համար, կքննարկվեն սեպտեմբեր ամսին ՀՀ ԱՎԾ –ի Տեղեկատվական տեխնոլոգաների զարգացման բաժնի աշխատակիցների հետ:

Հայաստանի գործընկերները ներկայացրեցին որակի ճշգրտման մեթոդները և ընթացակարգերը, որոնք կիրառվում են որոշակի ապրանքների համար: ՀՍԳԻ-ում որակի ճշգրտման մեթոդների կիրառման համար օգտվել են CENEX ձեռնարկից՝ որպես համապատասխան փաստաթուղթ, որը կօգնի որոշելու այն մեթոդները, որոնք կարող են օգտագործվել հատուկ դեպքերում: Գործնականում հիմնականում կիրառվում են հետևյալ մեթոդները՝ փաթեթային չափի ճշգրտում, անմիջական գների համադրում, համընկնումներ, կամրջային համընկնում, տարբերակային գին և տրամաբանական որակի ճշգրտում: Քննարկվեց նաև ապրանքի ապրանքանիշի շերտավորման հարցը: Առաջարկվեց կիրառել ապրանքանիշի շերտավորումը, որը կիրառվում է Գնողունակության համարժեքության ծրագրում՝ կոնկրետ ապրանքների խմբերի համար: Առաջարկված մոտեցումը նպաստում է ճշգրտումներին, որոնք պայմանավորված են որակի փոփոխության հետ: Քննարկման ընթացքում նշվեց ապրանքի աննշան և հիմնական բնութագրերի տարանջատման կարևորությունը:

Սեզոնային ապրանքների հետ կապված հարցերը

Հայաստանյան գործընկերները ԵՄ փորձագետներին ներկայացրեցին ՍԳԻ-ի սեզոնային ապրանքների վարաբերյալ ընթացակարգերը: Սեզոնային ապրանքները բաժանվում են երկու խմբի՝ <<խիստ>> սեզոնային ապրանքներ և <<թույլ>> սեզոնային ապրանքներ: <<Խիստ>> սեզոնային ապրանքները այն սեզոնային ապրանքներն են, որոնք գնման համար հասանելի չեն և որոնց համար չեն կարող դիտարկվել գները տարվա որոշակի ժամանակահատվածում: <<Թույլ>> սեզոնային ապրանքները նրանք են, որոնք հասանելի են գնման համար և որոնց գները կարող են դիտարկվել տարվա ընթացքում, սակայն դրանց գնային մակարդակը և վաճառքի քանակը էապես տարբերվում են տարվա ընթացքում:

Սեզոնից դուրս ժամանակահատվածում գները գնահատվում են ըստ այն խմբի գնային շարժի, որին պատկանում է տվյալ ապրանքը՝ սկսած սեզոնից դուրս գտնվելու ժամանակահատվածի հենց առաջին ամսվանից: Ենթադրվում է, որ սեզոնը սկսվում է այն ժամանակ, երբ տվյալ ապրանքը գնադիտարկման ժամանակ հասանելի է 50 տոկոսի չափով կամ ավելին: Կշիռները անփոփոխ են մնում տարվա ընթացքում:
Մանրամասնորեն քննարկվեց ներկայացված ընթացակարգը ԵՄ փորձագետների կողմից տրվեցին որոշ առաջարկություններ կապված սեզոնից դուրս ժամանակահատվածի առաջին ամսում բնորոշ գնի կիրառման, ինչպես նաև որոշակի տեխնիկական լուծումներ սեզոնի առաջին ամսվա մեջ ապրանքի ի հայտ գալու վերաբերյալ:

Գնադիտարկման ընթացակարգի վերակազմակերպումը

Հայաստանում գնադիտարկումների ընթացակարգի վերակազմակերպման հատուկ աշխատանքային ծրագիրը, որը մշակվել է ԵՄ փորձագետների կողմից ՀՀ ԱՎԾ Գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի մասնագետների հետ միասին Ե.4 առաքելության ընթացքում դեռևս ուժի մեջ է: Հիմնական գործունեությունները պետք է իրականացվեն նախքան ԵՄ փորձագետների վերջին առաքելությունը (Ե.6 Իրականացման ուսումնասիրում):
Պրն. Գուրգեն Մարտիրոսյանը ներկայացրեց որոշ գաղափարներ վերակազմակերպման վերաբերյալ: Գնադիտարկումների քանակը կնվազեցվի՝ երեքից դառնալով ամսեկան երկուական, առևտրի կետերի և ապրանքների քանակը կվերանայվի, գնադիտարկողների ծանրաբեռնվածությունը կնազեցվի և պատասխանատվությունները կվերադասավորվեն: ԵՄ փորձագետները շեշտեցին գնադիտարկողների աշխատանքի վերլուծությունների և ծանրաբեռնվածության գնահատման կարևորությունը:

ՀՍԳԻ վերապատրաստման սեմինար վիճակագրության տարածքային գործակալությունների համար

Թվինինգ ծրագրի շրջանակներում լրացուցիչ գործունեություն էր կազմակերպվել՝ Վերապատրաստման սեմինար, որն իրականացվեց առաքելության երրորդ օրը: Սեմինարին մասնակցում էին վիճակագրության տարածքային գործակալությունների գնադիտարկողները, վիճակագրության տարածքային գործակալությունների պետերը, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ և արտաքին շահառուներ: Տես մասնակիցների ցանկը հավելված 3-ում: ԵՄ փորձագետները շնորհանդեսներ ներկայացրեցին ՀՍԳԻ վերաբերյալ և իրենց փորձը կիսեցին ՀՍԳԻ իրականացման, գնադիտարկումների ընթացակարգերի և տվյալների որակի ապահովման վերաբերյալ: ԵՄ փորձագետները և ՀՀ ԱՎԾ –ի աշխատակիցները պատասխանեցին հարցերին, որոնք բարձրացվել էին Թվինինգի սեմինարի մասնակիցների կողմից: Պրն. Գուրգեն Մարտիրոսյանը ներկայացրեց գնադիտարկումների նվազեցման հետ կապված իրականացված վերլուծությունները և ներկայացրեց վերակազմակերպման պլանը:

Անհրաժեշտ է նշել, որ սեմինարը բավականին լավ կազմակերպված էր և դրականորեն գնահատվեց գնադիտարկողների կողմից: Արդյունավետ քննարկումներ տեղի ունեցան և վիճակագրության տարածքային գործակալությունների ներկայացուցիչները իրենց կարծիքներն արտահայտեցին գնադիտարկումների վերակազմակերպման հարցերի վերաբերյալ և ներկայացրեցին իրենց խնդիրները:

Այլ հարցեր

ՇԵ ծրագրի ղեկավարի՝ ՀՀ ԱՎԾ նախագահ պրն. Ստեփան Մնացականյանի հետ բրիֆինգ տեղի ունեցավ առաքելության ընթացքում: Ներկայացվեցին և քննարկվեցին դիտողությունները, եզրակացությունները և առաջարկությունները, ինչպես նաև հաջորդ գործունեությունից՝ Ե.6-ից առաջ իրականացվող գործողությունները: Քննարկվեց նաև սեմինարի օրակարգը:

3. Եզրակացություններ և առաջարկություններ

ՀՀ ԱՎԾ մասնագետների կողմից իրականացված վերլուծությունները, որոնք վերաբերվում են գնաղիտարկումների քանակի նվազեցմանը և դրա ազդեցությանը տարեկան փոփոխության տոկոսի վրա, ցույց են տալիս, որ գնաղիտարկումների հաճախականության նվազեցումը՝ այն ամսեկան երեքից երկու դարձնելը չնչին ազդեցություն կունենա: Առաջարկվեց շարունակել ՍԳԻ փորձնական հաշվարկները մինչև 2012 թվականի վերջը և վերլուծել ազդեցությունը ՍԳԻ վրա Երևանի համար:

Հետագայում պետք է շարունակվեն որակի ճշգրտման մեթոդների հետագա իրականացումները: Որակի ճշգրտման ընթացակարգերի փաստաթղթավորումը պետք է շարունակվի:

ԱՍԴՆ/ՀՍԳԻ դասակարգման աշխատանքները գների վիճակագրության միջավայրում կշարունակվեն իրականացվել: Առաջարկվեց մանրամասն վերլուծել ԱՍԴՆ/ՀՍԳԻ կատեգորիաները, որոնք ներկայումս ներառված չեն ՍԳԻ մեջ, և եթե անհրաժեշտ է ընդլայնել ապրանքների և առևտրի կետերի ընդգրկումը:

Առաջարկվեց առավել շատ ջանքեր գործադրել՝ միջանկյալ ՀՍԳԻ հաշվարկները մինչև սույն տարվա վերջ սկսելու համար:

ՀՀ ԱՎԾ-ին անհրաժեշտ կլինի հետագա տեխնիկական աջակցության ցուցաբերումը և խորհուրդները՝ ԵՄ օրենսդրությունը ՀՀ ԱՎԾ-ի ազգային վիճակագրական միջավայր տեղափոխելու համար:

ՍԳԻ որակի և համադրելիության բարելավման նպատակով ՀՀ ԱՎԾ –ն պետք է շարունակի ՀՍԳԻ նվազագույն ստանդարտների իրականացումը վիճակագրական միջավայրում:

4. Հաջորդ առաքելությունից առաջ իրականացվող գործողություններ (Ե.6)

Բաղադրիչ Ե-ի շրջանակներում հաջորդ գործունեությունը կլինի վերջինը՝ Ուսումնասիրման առաքելություն, Ե.6, որը հավանաբար տեղի կունենա 2012 թվականի դեկտեմբերի սկզբին:

ՇԵ և ԱՊ երկրի փորձագետները որոշեցին, որ աշխատանքի և գործողությունների մեծ մասը ուժի մեջ են և պետք է իրականացվեն և փաստաթղթավորվեն նախքան վերջին գործունեությունը:

- Շարունակել վերլուծությունները կապված ամսեկան գնադիտարկումների հաճախականության նվազեցման ազդեցության վերաբերյալ ՍԳԻ վրա՝ ելնելով Երևան քաղաքի օրինակի վրա;
- Վերանայել Հայաստանի ՍԳԻ ապրանքները և առևտրի կետերի ընտրանքը՝ ԱՍԴՆ/ՀՍԳԻ սպառման կատեգորիաները ունենալու համար, որը պետք է ներառվի ՀՍԳԻ ընդգրկման մեջ;
- Փաստաթղթավորել իրականացված աշխատանքները *(գրավոր նյութերը թարգմանել անգլերեն):*
    - ✓ որակի ճշգրտման մեթոդների ընթացակարգերի իրականացում;
    - ✓ ԱՍԴՆ/ՀՍԳԻ դասակարգման իրականացում;
    - ✓ ՍԳԻ կշիռների կազմում;
    - ✓ .
    - ✓ ՍԳԻ սեզոնային ապրանքների հետ կապված աշխատանքներ:
-
- Պատրաստել որակի հռչակագրեր ՀՍԳԻ համար՝ որպես փաստաթղթավորման գործընթացի մի մաս;
- Մշակել մանրամասն պլան գնադիտարկումների ընթացակարգի վերակազմակերպման վերաբերյալ *(նախընտրելի է գրավոր նյութեր, որոնք թարգմանված կլինեն անգլերեն լեզվով)*
- Պատրաստել համառոտ զեկույց ձեռք բերված առաջընթացի վերաբերյալ նախքան Ուսումնասիրման առաքելությունը՝ Ե.6 (*գրավոր նյութերը թարգմանել անգլերեն)*

Որոշվեց, որ փաստաթղթավորումը պետք է պատրաստ լինի թարգմանության համար մոտավորապես վերջին՝ Ե.6 գործունեությունը սկսելուց մեկ ամիս առաջ: Փաստաթղթավորման կառուցվածքը կորոշվի 2012 թվականի սեպտեմբերի սկզբին:

Ե.4 առաքելության ընթացքում ամփոփվել է աշխատանքային ծրագիրը (տես Ե.4 առաքելության զեկույցի հավելված 5-ը), որը քննարկվեց նշված աշխատանքային առաջադրանքների հետ միասին և արդյունքում աշխատանքային ծրագիրը մնաց անփոփոխ:

Հավելված 1. Տեխնիկական առաջադրանք (Ե.4.2) Հուլիսի 11-13, 2012

Գործունեություն Ե.4. 2 Վերապատրաստման սեմինար ՀՍԳԻ վերաբերյալ Վիճակագրության տարածքային գործակալությունների համար

1. Գործունեության նպատակը

Գործունեության նպատակն է՝

- **Հետևել բաղադրիչի աշխատանքային ծրագրին ինչպես նշված է Ե.4 առաքելության զեկույցում**
- **Խորհուրդներ տրամադրել ընթացիկ ենթա-ծրագրերի վերաբերյալ կապված ՍԳԻ/ՀՍԳԻ զարգացման հետ**
- **Մասնակցել վիճակագրության տարածքային գործակալությունների և արտաքին շահառուների համար կազմակերպված սեմինարին**
- **Ներկայացնել և քննարկել ազգային ՍԳԻ և ՀՍԳԻ տարբերությունները**
- **Ներկայացնել Լատվիայի և Լիտվայի փորձը ՀՍԳԻ ներկայացման վերաբերյալ**
- **Խորհուրդներ տրամադրել գնադիտարկումների վերակազմակերպման վերաբերյալ**

2. Գործունեության ակնկալվող արդյունքները

Շահառուները տեղեկացված են ընթացիկ գործողությունների վերաբերյալ: Գնադիտարկումների վերակազմակերպման պլանավորումը նախաձեռնված և մշակված է: Հնարավոր ճշգրտումներ են իրականացվել աշխատանքային ծրագրում:

3. Ծրագրի մասնակիցները

Պրն. Գագիկ Գևորգյան, Վիճակագրության Պետական Խորհրդի անդամ (ՇԵ բաղադրիչի ղեկավար)
Պրն. Գուրգեն Մարտիրոսյան, Գների Վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ
Մարիամ Երիցյան, Գների Վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի գլխավոր մասնագետ
Օսկարս Ալկսնիս, Լատվիայի Վիճակագրության Կենտրոնական Բյուրո, Գների վիճակագրության բաժին, ենթաբաժնի պետ
Նադեժդա Ալեյեվա, Լիտվայի Վիճակագրական Ծառայության Գների բաժնի պետ

Հավելված 2. ԱՊ փորձագետների հանդիպման ծրագիրը, 2012 թվականի հուլիսի 11-13

Ժամը	Վայրը	Միջոցառումը	Նպատակը/մանրամասները
Չորեքշաբթի Հուլիսի 11 առավոտյան	Կոնգրես հյուրանոց	Հանդիպում ԹՄԽ հետ	Շաբաթվա ծրագրի քննարկում
Կեսօրին	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և փորձագետներ ի հետ	Ընթացիկ կարգավիճակը: Առաջընթացը և զարգացումները նախորդ առաքելությունից ի վեր (Ե.4 և Ե. 5) Վերապատրաստման սեմինարի օրակարգի հաստատում և շնորհանդեսների քննարկում
Հինգշաբթի Հուլիսի 12, առավոտյան	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ փորձագետներ ի հետ	Քննարկումներ և խորհուրդներ ՀՍԳԻ միջանկյալ հաշվարկների համակարգ ստեղծելու վերաբերյալ Որակի ճշգրտման վերաբերյալ հետագա խորհուրդներ
Կեսօրին	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ փորձագետներ ի հետ	Հետևել աշխատանքային ծրագրի պլանավորման հարցերին Հայաստանի ՀՍԳԻ զարգացման համար
	ՀՀ ԱՎԾ	Բրիֆինգ ՇԵ բաղադրիչի ղեկավարի հետ	Եզրակացություններ, քննարկումներ և առաջարկություններ: Հետևանքները հաջորդ գործունեության համար ՇԵ փորձագետների համար կիրառելի աշխատանքային ծրագիրը:
Ուրբաթ, 13 Հուլիսի	Էրեբունի պլազա	Վերապատրաստման սեմինար	Վիճակագրության տարածքային գրասենյակների և արտքաին շահառուների համար- ստորև տես օրակարգը

ՀՍԳԻ վերապատրաստման սեմինարի նախնական օրակարգը , 13 Հուլիսի, 2012 թ.

10:00 Գրանցում
10:30 Ողջույնի խոսք և Թվինինգի ներկայացում
10:40 ԱՊ փորձագետները կներկայացնեն ՀՍԳԻ վերաբերյալ ԵՄ կանոնակարգը
Ինչպես նաև ՀՍԳԻ և ՍԳԻ միջև տարբերությունները և նպատակները
11:10 Սուրճի ընդմիջում
11:30 ՇԵ փորձագետները կներկայացնեն կատարված վերլուծությունները գնաղիտարկումների նվազեցման վերաբերյալ և գնաղիտարկումների վերակազմակերպման վերաբերյալ
12:00 Քննարկումներ: հարցեր և պատասխաններ

12:30 Նախաճաշ
13:30 ԱՊ փորձագետները կներկայացնեն ՀՍԳԻ փորձը Լատվիայում և Լիտվայում
14:30 Գնադիտարկումների վերակազմակերպմանն առնչվող մեթոդաբանական հարցեր
15:00 Սուրճի ընդմիջում
15:30 Խմբակային քննարկումներ գնադիտարկումների վերակազմակերպման թեմայով
16:30 Լիագումար նիստ, խմբերը կներկայացնեն իրենց տեսակետները
17:30 Եզրակացություններ և հանդիպման ամփոփում
18:00 Ընթրիք

Հավելված 3. Անձինք, որոնց հետ հանդիպումներ են տեղի ունեցել

Պրն. Ստեփան Մնացականյան, ՀՀ ԱՎԾ նախագահ, ՇԵ ծրագրի ղեկավար
Տկն. Անահիտ Սաֆյան, Միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ

Պրն. Գուրգեն Մարտիրոսյան, Գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ
Տկն. Մարիամ Երիցյան, Գների Վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի գլխավոր մասնագետ
ՀՍԳԻ սեմինարի մասնակիցները, 13 հուլիսի, 2012

Անունը (մամուլ)	**Լրատվամիջոց**
Ռուբինա Առաքելյան	Շարմ
Հայկազ Ղուբաթյան	Lurer.com
Հրաչյա Մարտիրոսյան	Հայաստան
Արմինակ Զարինյան	Օրակարգ
Գևորգ Խաչատրյան	Կենտրոն հեռուստարնկերություն
Լիլիան Ղազարյան	Panorama.am
Հասմիկ Հակոբյան	Panorama.am
Լիանա Եղիազարյան	Հանրային ռադիո
Անի Դարբինյան	ANCA Գլենդել
Անունը	**Կազմակերպություն**
Նադեժդա Այելեվա	Լիտվայի վիճակագրություն
Օսկարս Այկսնիս	Լատվիայի վիճակագրության կենտրոնական բյուրո
Մարտին Գայստյան	ՀՀ Կենտրոնական բանկ
Տիգրան Քաթանյան	Համաշխարհային բանկ
Երազիկ Դալաքյան	<<Նոր Սերունդ>> Ս.Պետերսբուրգ
Դիանա Աֆյան	ՀՀ Կենտրոնական բանկ
Պայծառ Գևորգյան	ՀՀ Կենտրոնական բանկ
Արմինե Մաթոսյան	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Արմինե Մանուկյան	ԱՄՀ
Գրետա Ադամյան	ՀՀ Ֆինանսների նախարարություն
Լիլի Կարապետյան	ՀՀ Ֆինանսների նախարարություն
Լիանա Աթոյան	ԹՄԽ թարգմանչուհի
Դիանա Գասոյան	ԹՄԽ օգնական
Թոմաս Բի	ԹՄԽ
Անունը	**Պաշտոնը կամ բաժինը ՀՀ ԱՎԾ- կենտրոնական գրասենյակում**
Ստեփան Մնացականյան	ՀՀ ԱՎԾ նախագահ
Գագիկ Գևորգյան	Վիճակագրության պետական խորհրդի անդման
Գուրգեն Մարտիրոսյան	Գների վիճակագորթլյան և միջազգային համադրումների բաժնի
Լուսյա Խաչատրյան	Ազգային հաշիվների և մակրոտնտեսական ցուցանիշների բաժնի
Անահիտ Սաֆյան	Միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ
Հասմիկ Եղիազարյան	Միջազգային վիճակագրական համագործակցության բաժին
Նարինե Բաբոյան	Գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժին
Հասմիկ Կարապետյան	Գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժին
Լիանա Գևորգյան	Գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժին
Գայանե Սարգսյան	Գների ճակագրության և միջազգային համադրումների բաժին
Մարիամ Երիցյան	Գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժին
Նարինե Մուշեղյան	Վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի պետ
Միլվա Ուլոբոբյան	Վիճակագրական տեղեկատվության տարածման բաժին
Վարդուհի Ավետիսյան	Վիճակագրական տեղեկատվության տարածման բաժին

Սուսան Հունանյան	Աշխատանքի բաժին
Արմենուհի Արուշանյան	Տնային տնտեսությունների բաժին
Հասմիկ Ղունաղջյան	Աշխատանքի բաժին
Սուսաննա Խաչատրյան	Ազգային հաշիվների բաժին
Դիանա Մարտիրոսովա	Տնային տնտեսությունների բաժնի պետ
Գայանե Պետրոսյան	Գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժին
Անուն	**ՀՀ ԱՎԾ տարածքային գործակալություններ**
Գրիգորան Արինե	Սյունիք
Լորետա Մկրտչյան	Արագածոտն
Սվետլանա Սիմոնյան	Աշտարակ
Գայանե Մարգարյան	Էջմիածին
Նվարդ Ավետիսյան	Էջմիածին
Անուշ Նիկողոսյան	Էջմիածին
Մարգարիտ Եղիազարյան	Մարտունի
Կարինե Մկրտչյան	Տավուշ
Նելլի Դավթյան	Տավուշ
Ռուզաննա Ղարաբեկյան	Տավուշ
Նազիկ Մաթևոսյան	Լոռի
Գայանե Ղազարյան	Լոռի
Հերմինե Պապիկյան	Լոռի
Վրեժ Մանուկյան	Լոռի
Ավետիք Մելիքյան	Երևան քաղաքի գործակալություն
Հովհաննես Հայրապետյան	Երևան քաղաքի գործակալություն
Անահիտ Մարգարյան	Շիրակ
Մարիետա Առաքելյան	Կապան
Ժաննա Օհանյան	Վայոց Ձոր
Միրանուշ Հարությունյան	Վայոց Ձոր
Մարյեն Ղազարյան	Վայոց Ձոր
Հակոբ Բաղայյան	Գեղարքունիք
Ալեքսանդր Գրիգորյան	Արարատ
Լեվիկ Մովսիսյան	Արագածոտն
Արփինե Մխիթարյան	Երևան քաղաքի գործակալություն
Գայանե Գևորգյան	Երևան քաղաքի գործակալություն
Նարինե Աղայան	Երևան քաղաքի գործակալություն
Հասմիկ Ապրեսյան	Երևան քաղաքի գործակալություն
Սուսաննա Ղամբարյան	Գյումրի
Անժելա Կոստանյան	Շիրակ
Հասմիկ Ունուսյան	Շիրակ
Նշան Ավետիսյան	Գեղարքունիք
Արմինե Օսեյան	Արարատ
Արմեն Մուրադյան	Արարատ
Հակոբ Հարությունյան	Վայոց Ձոր
Անահիտ Թովմասյան	Չարենցավան
Արփինե Անդրեասյան	Չարենցավան
Գոհար Ղավազյան	Չարենցավան
Վլադիմիր Գրիգորյան	Սյունիք
Գայանե Արուշանյան	Սյունիք
Իշխան Սարգսյան	r Արմավիր
Զարուհի Գաբրիելյան	Թալին
Վահան Դավթյան	Կոտայք

Հավելված 4. Սեմինարի մամուլի հաղորդագրությունը, 13 հուլիսի 2012

Մամուլի հաղորդագրություն

Ք. Երևան 12 հուլիսի 2012 թ.

ԵՄ սպառողական գների ինդեքսի ներդրումը Հայաստանում

Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունը (ՀՀ ԱՎԾ) և <<Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը Թվինինգ ծրագրի միջոցով>> ԵՄ Թվինինգ ծրագիրը 2012 թվականի հուլիսի 13-ին կկազմակերպեն սեմինար նվիրված Եվրոպական Միության <<Հարմոնիզացված սպառողական գների ինդեքսի>> (ՀՍԳԻ) ներդրմանը Հայաստանում:

Որպես գնաճի չափման պաշտոնական միջոց, սպառողական գների ինդեքսը վիճակագրական հիմնական ցուցանիշներից է : Եվրոպական Միության բոլոր պետությունները հրապարակում են ինչպես ՀՍԳԻ, այնպես էլ ազգային սպառողական գների ինդեքս (ՍԳԻ): Հայաստանում ՀՍԳԻ ներդրումը կարևոր քայլ է ԵՄ ստանդարտներին համապատասխանեցման համար և հնարավոր է, որ դա տեղի ունենա 2014 թվականի սկզբին: Տվյալների հավաքագրման փոփոխությունների մեծ մասի մեկնարկը տեղի կունենա 2013 թվականի սկզբին, մինչդեռ սպառողական ապրանքների և ծառայությունների վերադասակարգումն արդեն իսկ ընթացքի մեջ է: Տվյալները կօգտագործվեն ՀՍԳԻ ծախսերի կշիռների որոշման համար:

Սեմինարը կանցկացվի՝ ներգրավելով ինչպես սպառողական գների ինդեքսի շահառուներին, այնպես էլ պրոֆեսիոնալ սպառողներին և կկենտրոնացվի երկու ինդեքսների տարբերությունների, դրանց ծավալների և հատուկ կիրառման վրա: Օրակարգի կարևոր թեմաներից է գործող ազգային սպառողական գների ինդեքսի տվյալների հավաքագրման վերակազմակերպումը: Կներկայացվի և կքննարկվի մեթոդաբանության վրա այդ փոփոխության ազդեցությունների մասին կատարված վերլուծությունը:

Սեմինարը կազմակերպված է ԵՄ փորձագետների մասնակցությամբ՝ Դանիայի վիճակագրությունից, Լիտվայի վիճակագրությունից և Լատվիայի վիճակագրության կենտրոնական բյուրոյից:

<<Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը>> Թվինինգ ծրագրի տևողությունը երկու տարի է և այն միտված է Հայաստանի վիճակագրության մի շարք ոլորտների ներդաշնակեցմանը Եվրոպական Միության ստանդարտներին:

Հանդիպում լրատվամիջոցների հետ.

Ժամը 10:30; 13 Հուլիսի 2012 (գրանցումը սկսվում է ժամը 10:00-ից)

Վայրը <<Էրեբունի պլազա>> բիզնես կենտրոնի <<Էրեբունի>> սրահում (9րդ հարկ)